ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ IX—XIII ԴԴ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

(Զուգաճեռներ արևելաքրիստոնեական կառույցների հետ)

ԱՐՇԱՎԻՐ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Բալկանյան թերակղզու և Քրիստոնեական արևելքի երկրների ճարտարապետական հուշարձանների համադրական ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզելու այդ երկրների ճարտարապետական աղերսները։

Բուլղարիայի հյուսիս-արևմտյան մասում պահպանվել են Պլիսկա և Պրեսլավ քաղաքների մնացորդները[1]։ Բուլղարական առաջին պետականության ժամանակաշրջանին (681—1018) պատկանող Պլիսկայի միջնաբերդի միջին մասում, պալատական հին շենքի տեղում Օմուրտագ թագավորը (816—831) կառուցել է պալատ[2], որի չափերն են 52×26,5 մ։ Պատերի մնացորդների հաստությունը տատանվում է 2,20—2,60 մ սահմաններում։ Դրանք շարված են խոշոր քարերով (բլոկներով), կարմիր շաղախով։ Պալատը եղել է երկհարկանի մի կառույց, որի առաջին հարկը բաղկացած է եղել երեք մասից՝ միջին չորս նեֆերից և երկու այլ մասերից, որոնք փակում էին առաջինի երկու ճակատները[3]։ Ընդ որում, նեֆերը բաժանող հաստ պատերի մեջ թողնված են եղել լայն բացվածքներ՝ մուտքեր (չորսը կողքի նեֆերի և երկուսը միջին պատերի մեջ)։ Ենթադրվում է, որ շենքի այս մասը օգտագործվել է որպես պահեստ[4]։ Ուշադրավ է, որ նեֆերը, բացառությամբ մեկի, հաղորդվում էին շենքի հյուսիսային մասի հետ։ Վերջինս բաղկացած է կիսակլոր աբսիդից, որի երկու կողմերում գտնվում են ուղղանկյունաձև սենյակներ։ Դրանց արևելյան և արևմտյան պատերի մեջ պահպանվել են մուտքերի բացվածքների մնացորդները։ Աբսիդի և սենյակների միջև կապը իրականացվում էր առաջինի պատերի մեջ գոյություն ունեցող մուտքերով։ Ի տարբերություն հյուսիսային մասի, հարավային ավելի լայն մասը բաղկացած է երկու՝ արևելքից արևմուտք ձգված սենյակներից։ Առաջին սենյակի արևմտյան կողմը մի քիչ ավելի լայն է։ Երկրորդ սենյակում կա մի նեղ տարածություն, որը ծառայել է երկրորդ հարկ բարձրանալու համար (նկ. 1ա)։ Շենքի առաջին հարկի բոլոր սենյակներն ունեցել են աղյուսաթաղ ծածկեր, ինչպես կարելի է ենթադրել նկ. 1ա-ում բերված հատակագծից։ Պեղումների ժամանակ հայտնաբերվել են ճարտարապետական մի շարք մանրամասներ՝ մարմարյա սյուների խարիսխներ, սեղանաձև խոյակներ, որոնցից մեկը՝ հոնիական վոլյուտաներով և երկշարք ար-

---

1 *Քանի որ այս քաղաքների պալատական շենքերը մեծ նմանություն ունեն միմյանց հետ, ուստի կծանրանանք դրանցից մեկի՝ Պլիսկայի պալատի ուսումնասիրության վրա։*

2 Проф. Милко Бичев, Архитектура Болгарии, София, 1960, с. 20.

3 Кръстю Миятев, Архитектурата на българското средневековие («Кратка история на българската архитектура», София, 1965, с. 68).

4 М. П. Цапенко, Архитектура Болгарии, М., 1953, с. 82.

մավենու տերևներով[5]։ Պրոֆ. Միլկո Բիչևը գրում է, որ շենքի պատերը մասամբ երեսպատված են եղել մարմարյա սալերով[6]։ Շենքի մնացորդների ուսումնասիրությունից պարզվել է, որ այն ունեցել է երկրորդ հարկ։ Կ. Շկորպիլի և Կր. Միաթևի կազմած այս հարկի հատակագծի (նկ. 1բ) համաձայն կարելի է ասել, որ նրա հորինվածքը, բացառությամբ հարավային մասի, նմանություն ունի վաղքրիստոնեական բազիլիկաների հետ։ Երկրորդ հարկի կոնստրուկցիաների մասին դատելը դժվար է. կարելի է ենթադրել, որ աբսիդի երկու կողմերի վրա եղած սենյակներն ունեցել են թաղային, իսկ միջին լայն նեֆը, ինչպես նաև հարկի հարավային մասը՝ փայտյա հարթ ծածկեր։



Նկ. 1—Պլիսկա. գահական պալատ. ա. առաջին հարկի հատակագիծ, բ. երկրորդ հարկի հատակագիծ։

Ուսումնասիրողները տարակարծիք են այս կառույցի հորինվածքի վերաբերյալ։ Այսպես, մի շարք ուսումնասիրողներ այն կապում են սասանյան (Սարվիստանի)[7], իսկ Կր. Միաթևը՝ Կոստանդնուպոլսի Մակնաուրա պալատների հետ (վերջինս հենվում է ոչ թե պալատի մնացորդների ուսումնասիրության վրա, այլ՝ ժամանակակիցների հիշողություններում բերված նկարագրության)[8]։ Դ. Վասիլևը և Ստ. Միխայլովը Պլիսկայի կառույցի մեջ տեսնում են տեղական շինարարական

---

[5] К. Миятев, Архитектура Болгарии («Всеобщая история архитектуры», т. 3, Л.-М., 1966, с. 390).

[6] Проф. Милко Бичев, նշվ. աշխ., էջ 20։

[7] B. Filov, Der Ursprung der altbulgarischen Kunst („Byzantinische Zeitschrift", 30, 1929—1931, S. 523—528); նույնի՝ Les palais vieux bulgares et les palais sassanides, („Recueil Th. Ouspenski", I, Paris, 1930, p. 80—86); նույնի՝ Geschichte der altbulgarischen Kunst, I, Berlin—Leipzig, 1932, S. 5—13; A. Protič, Sassanidskata hudozestivena tradicia i prabalgarite („Izvestia na Archeologiceskia institut", IV, 1926—1927, S. 211—235); նույնի՝ Les origines sassanides et byzantines de l'art bulgare („Melanges Charles Diehl", Starobalgarckoto izkustvo, Sofia, 1959); S. Stančev, Théories et faits („Byzantinobulgarica", II, 1962, p. 349—365); S. Vaklinov, Formirane na starobalgarskata kultura, Sofia, 1977, S. 108—109; N. Mavrodinov, L'ancien art bulgare („Starobalgarskoto izkustvo", Sofia, 1959); S. Bojadziev, Dvorcovata arhitektura na Pliska. Tradicia i novi certi v balgarskoto izkustvo, Sofia, 1976, S. 201.

[8] K. Miatev, Der Grosse Palast in Pliska und die Magnaura von Konstantinopel („Actes du IVe Congrès international des études byzantines" „Bulletin de l'Institut archéologique", 7, Sofia, 1936, p. 136—144); նույնի՝ Krumoviat dvorec i drugi novootkriti postrojki v Pliska („Bulletin de l'Institut archéologique", XIV, Sofia, 1940—1942, p. 121—130); նույնի՝ Die mittelalterliche Baukunst in Bulgarien, Sofia, 1974, S. 50—51.

ավանդույթների արտացոլումը[9]։ Սովետական գիտնական Ա. Լ. Յակոբսոնը ցույց է տալիս, որ այս պալատն անհամեմատ ավելի շատ աղերսներ ունի հայ պալատական հորինվածքների (Վաղարշապատ, Դվին, Արուճ), քան Կոստանդնուպոլսի և սասանյան պալատների հետ[10]։ Բուլղարացի գիտնական Ստամեն Միխայլովը, որի կարծիքով Պլիսկայի և Պրեսլավի պալատների ճարտարապետությունը հենվում է տեղական ավանդույթների վրա, բանավիճելով Ա. Լ. Յակոբսոնի հետ, նշում է, որ հայկական պալատները զգալիորեն տարբերվում են հիշված բուլղարականներից և ավելի շուտ վերջիններս նմանվում են սասանյան պալատներին[11]։

Դժվար չէ հասկանալ, որ Պլիսկայի պալատի ճարտարապետական հորինվածքի հարցի լուծումը պահանջում է առաջին հերթին կառույցի մանրամասն վերլուծություն՝ նրան շրջապատող ճարտարապետական հուշարձանների ֆոնի վրա, որոնք ստեղծվել են մինչև Պլիսկայի պալատի կառուցումը։ Ուսումնասիրությունները համոզում են, որ շենքի առաջին հարկը գլխավոր հարկ չի եղել. հետևաբար, կարելի է ճիշտ համարել այն կարծիքը, որի համաձայն այն օգտագործվել էր որպես պահեստ։ Դա հաստատվում է նաև նրանով, որ շենքի հարավային մասի կազմի մեջ մտնող երկու նեղ սենյակներից մեկը աստիճաններով, խուլ պատով բաժանված է հյուսիսային չորսնեֆանի միջին մասից։

Կ. Շկորպիլի և Կր. Միաթևի կազմած երկրորդ հարկի հատակագիծը նման է Պլիսկայի բերդից դուրս գտնվող Մեծ բազիլիկայի (IX դ.) հատակագծին[12]։ Այսպես, ուշադրություն է արժանի ուսումնասիրվող շենքի և բազիլիկայի միջին նեֆի լայնությունը (13,7 մ)։ Ինչպես հայտնի է, այս բազիլիկան հիշված ժամանակի համար ամենախոշորն էր բուլղարական ճարտարապետության մեջ[13]։ Այս երկու հուշարձանների միջին նեֆի այսպիսի լայնությունը մի բացառիկ երևույթ է վաղ միջնադարյան բուլղարական ճարտարապետության համար։ Հավանական է, որ դրանց ծածկը փայտից եղած լիներ, ինչպես վաղքրիստոնեական նույնատիպ բազմաթիվ կառույցների մեջ, որոնց հետ Պլիսկայի բազիլիկան ունի ընդհանուր գծեր։ Նմանություն կա նաև միջնաբերդի շենքի հարավային առաջին հարկի և բազիլիկայի արևմտյան մասերի հորինվածքների մեջ։ Հաշվի առնելով վերը նշվածները, ենթադրում ենք, որ Պլիսկայի պալատը եղել է անկասկած երկհարկանի և որ երկրորդ հարկի միջին նեֆը եղել է զգալի չափով ավելի բարձր, քան կողքի նեֆերը։ Միջին նեֆը բավարար լույս էր ստանում երկայնական պատերի վերևի մասերում տեղավորված լուսամուտներից։ Չի բացառվում, որ կողքի փակ նեֆերի փոխարեն եղել են բաց գալերեաներ։ Այս ամենը հիմք է տալիս ասելու, որ կառույցն ունեցել է պաշտամունքային դեր, ինչպիսին է Պլիսկայի բերդից դուրս գտնվող Մեծ

---

[9] D. Vassilev, Stroitelnata tradicia na prabalgarskite dvorci v Pliska, Sofia, 1937, S. 95 և այլն; S. Michailov, Sur l'origine de l'architecture monumentale du Premier royaume bulgare („Starinar", nouvelle série, XX, 1969, p. 213–222).

[10] А. Л. Якобсон, К изучению средневековой болгарской архитектуры (армянские параллели) («Византийский временник», т. XXVIII, М., 1968, с. 202).

[11] S. Michailov. Նշվ. աշխ., էջ 8:

[12] Кръстю Миятев, Архитектурата на българското средневековие («Кратка история.....», с. 78, 80.

[13] Ատրիումի հետ միասին շենքն ունի 99 մ երկարություն և 29,5 մ լայնություն, տե՛ս Проф. Милко Бичев, Նշվ. աշխ., էջ 20։

բազիլիկան[14]։ Սա շատ հավանական է, քանի որ այս կառույցների շինության հիշտ ժամանակը հայտնի չէ[15]։ Եթե ընդունենք Բորիսի թագավորությունը, ապա Մեծ բազիլիկայի և միջնաբերդի երկհարկանի շենքերը կառուցվել են միաժամանակ և հավանական է, որ բազիլիկան կառուցվել է ավելի շուտ, քան միջնաբերդի շենքը։ Միայն սրանով կարելի է բացատրել երկու շենքերի հատակագծերի սխեմաների լուծումների նմանությունը։ Այսպիսով, կարելի է ասել, որ Պլիսկայի, ինչպես և Պրեսլավի պալատների հատակագծային հորինվածքի սասանյան, կոստանդնուպոլսյան և հայկական ծագման մասին գիտական ենթադրությունները իրական չեն։ Ուսումնասիրվող շենքի, Պլիսկայի և Պրեսլավի միջնաբերդի շենքերի մնացորդների՝ այն ժամանակվա բուլղարական շինարվեստի համար անսովոր պատերի շարվածքները կարող են հիմք հանդիսանալ ենթադրելու դրանց արևելյան կամ, որ առավել հավանական է, հայկական կառուցողական տեխնիկային պատկանելը։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ, հավանաբար, Պլիսկայի կառույցի երկհարկանի կոմպոզիցիան ազդել է ավելի ուշ ժամանակի (XI—XII դդ.) բուլղարական երկհարկանի հուշարձանների՝ Բաչկովյան վանքի և Ասենովյան բերդի սբ. Աստվածածին եկեղեցիների հորինվածքների վրա։ Ուշագրավ է, որ այս երկու հուշարձանների արևելյան, ինչպես և Պլիսկայի հուշարձանի հյուսիսային մասերը վկայում են, որ դրանց միջև կա որոշ կապ (անկախ նրանից, թե ինչպիսի նպատակների են ծառայել դրանց առաջին հարկերը)։

Բուլղարական առաջին պետականության ժամանակաշրջանին են պատկանում նաև Պրեսլավի շրջակայքի՝ Վինիցայի և Գերման գյուղի նույնանուն եկեղեցիները[16]։ Ինչպես ներսից, այնպես էլ դրսից բարդացված, մեծ և փոքր խորշերով շենքի պատերը թույլ են տալիս Վինիցայի հուշարձանի մեջ տեսնել մի սյարդ հորինվածք՝ քառակուսի հատակագծով շենք, որի մեջ ընդգրկված է եղել զմբեթի հիմքը։ Այս շենքին կից եղել է գավիթ, որը հատուկ է այս և ավելի ուշ ժամանակների բազմաթիվ կառույցներին (նկ. 2)։

Ըստ Կր. Միաթևի և Ստ. Ստանչևի, Վինիցայի և Պատլեինայի եկեղեցիները X դ. պրեսլավյան ճարտարապետական դպրոցի տիպիկ օրինակներից են։ Ս. Բոյաջիևը նշում է, որ Պրեսլավի հայտնի կլոր եկեղեցին օրինակ է եղել Վինիցայի եկեղեցու համար[17]։ Այս կարծիքը ընդունում ենք նաև մենք։

Ստ. Ստանչևը նշում է Վինիցայի եկեղեցու հորինվածքի կապը Կոմուրդո և Նիկորցմինդայի վրացական հուշարձանների հետ։ Վերջիններիս զմբեթների թմբուկների հիմքերը վեցանիստ են, ինչպես ուսումնասիրվող հուշարձանի-

---

14 Մ. Պ. Ցապենկոն նշում է, որ Պլիսկայի և Պրեսլավի պալատների ճարտարապետական ձևերը որոշ չափով հիշեցնում են Բուլղարիայի մինչֆեոդալական բազիլիկաներին (տե՛ս М. П. Цапенко, Архитектура Болгарии, с. 84):

15 Բազիլիկայի կառուցման ժամանակը կապում են Բորիսի թագավորության ժամանակաշրջանի (852—889) և մինչև իսկ X դ. սկզբի հետ (Проф. Милко Бичев, նշվ. աշխ., էջ 20; М. П. Цапенко, նշվ. աշխ., էջ 93)։

16 Առաջինը գտնվում է Պրեսլավից 17 կմ հարավ, երկրորդը՝ Արևմտյան Մակեդոնիայում, Փոքր Պրեսպա լճի հյուսիս-արևելյան մասում։

17 К. Митев. Архитектура Болгарии, с. 395; St. Bojadjiev, L'église du village Vinica à la lumière de nouvelles données („Byzantinobulgarica", t. II, Sofia, 1966, p. 243).

նը[18]։ Ուշագրավ է, որ Ստ. Ստանչևը Վինիցայի եկեղեցին համարում է X դ. կառույց[19], այն դեպքում, երբ վրացական հուշարձանները կառուցվել են՝ առաջինը 964 թ., երկրորդը՝ 1010—1014 թթ.[20]։ Իհարկե, ելնելով այսպիսի ժամանակագրությունից, դժվար է խոսել Վինիցայի եկեղեցու վրա վրացական հուշարձանների հորինվածքների ազդեցության մասին։ Վերլուծությունը ցույց է տվել, որ դրանց գմբեթների հյուսիսային և հարավային հենարանների դերը



Նկ. 2—Պրեսլավ. Վինիցա. եկեղեցու հատակագիծը։

կատարում են կոնխերը և թաղերը։ Վինիցայի կառույցում նման հենարանների անհրաժեշտություն չկա, քանի որ թմբուկի համար մասամբ հենարաններ են ծառայում նրա հյուսիսային և հարավային պատերը։ Այսպիսով, Վինիցայի եկեղեցու հորինվածքում տեսնում ենք սովորական քառակուսի, որի մեջ ընդգծված է եղել գմբեթի հիմքը։ Այս տիպի շենքը դեռ V—VI դդ. հիմք հանդիսացավ քրիստոնեական արևելքի մի շարք կառույցների՝ մկրտարանների, եկեղեցիների ավանդատների, բուն եկեղեցիների աղոթատեղերի համար և այլն։

Գմբեթավոր սբ. Գերման եկեղեցու (1006 թ.) կենտրոնում տեղադրված են քառակուսի կտրվածքով չորս սյուներ, որոնց վրա հենվում է գմբեթավոր թմբուկը։ Շենքի արևելյան ճակատն ունի դուրս եկած կիսակլոր երեք աբսիդներ, իսկ արևմտյան պատին կից է գավիթը։ Ըստ պրոֆ. Միլկո Բիչևի, այս եկեղեցու մեջ բացակայում է աբսիդին կից տարածությունը, որն այն բաժանում է բուն եկեղեցու աղոթասրահից։ Նրա կարծիքով այս եկեղեցու տիպը տեղական է, որի վրա չի նկատվում Կոստանդնուպոլսի ճարտարապետական դպրոցի ազդեցությունը։ Նա նշում է նաև, որ սբ. Գերման եկեղեցու տիպը բնորոշ է Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի և Փոքր Ասիայի մի շարք եկեղեցիների համար[21]։ Առանց նախախորանային տարածության չորսյունանոց եկեղեցու տիպը կազմավորվել է Փոքր Ասիայում՝ միջինբյուզան-

---

18 St. Bojadziev, նշվ. աշխ., էջ 243։

19 Նույն տեղում, էջ 243։

20 Г. Н. Чубинашвили, Архитектура Грузии («Всеобщая история архитектуры», т. 3, Л.-М., 1966, с. 355, рис. 47/1,3).

21 Проф. Милко Бичев, նշվ. աշխ., էջ 33։

դական Հարտարապետության մեջ[22]։ Հայաստանի և Վրաստանի VII դ. հուշարձաններում, ինչպես, օրինակ, Էջմիածնի, Գայանեի, Բագարանի, Ցրոմիի և այլ եկեղեցիների մեջ, նախախորանային տարածությունը բացակայում է։

Բուլղարիայի հս.-արևելյան մասում՝ Կուլատայում (Պետրիչկա), պահպանվել է եկեղեցի, որը Կր. Միաթևը թվագրում է X—XII դդ.։ Նրա կարծիքով այս կառույցը հիշեցնում է հայկական նույնատիպ եկեղեցիները։ Նույնանման եկեղեցի գոյություն ունի Փոքր Պրեսպա լճի արևմտյան ափին գտնվող Վինենի գյուղում։ Կր. Միաթևը նշում է, որ այս երկու եկեղեցիների միջև գոյություն ունի որոշ կապ և ենթադրում է, որ դրանց համար նախատիպ է ծառայել մի հուշարձան, որը չի հասել մեր օրերը[23]։ Կուլատայի (Պետրիչկա) եկեղեցին ունի ուղղանկյուն հատակագիծ, որի մեջ ընդգծված են երեք աբսիդներ։ Արևելյան աբսիդի առջևի բեմի և համեմատաբար երկար արևմտյան թևի առկայության պատճառով, շենքն ունի ձգված հատակագիծ։ Կառույցի անկյուններում կան ուղղանկյուն սենյակներ, արևելյան կողմերում՝ կիսակլոր խորշերով։ Հարավ-արևմտյան սենյակում կա մի փոքր խաչաձև, կիսակլոր թեվերով մկրտարան։ Եկեղեցու արևմտյան պատին կից գտնվում է գավիթը, որի հյուսիսային և հարավային պատերը եկեղեցու համապատասխան պատերի շարունակությունն են։ Ուշագրավ է, որ արևելյան աբսիդը ունի երեք նիստ։ Արևմտյան սենյակները հաղորդվում են գավթի հետ առաջինների արևմտյան ճակատների վրա եղած մուտքերի միջոցով։ Հարավային և հյուսիսային ճակատների վրա կան կիսակլոր, աստիճանաձև խորշեր։ Ուշագրավ է, որ այս խորշերը տեղավորված են հյուսիսային ու հարավային աբսիդների և արևմտյան սենյակների պատերի հատման տեղում և դրանց դերը, իհարկե, կոնստրուկտիվ է, չբացառելով նաև գեղարվեստականը, այսինքն՝ դեկորատիվ լինելը։ Ուշադրություն է գրավում այն, որ, ի տարբերություն նույնատիպ եկեղեցիների, այստեղ բուն եկեղեցու արևմտյան մուտքը շատ լայն է, այսինքն՝ հավասար է համարյա արևելյան աբսիդի տրամագծին (տե՛ս գծ.)։

Կուլատայի (Պետրիչկա) եկեղեցին նման է հայկական եկեղեցիներին (գլխավոր երեք աբսիդների և դրանց անկյունային սենյակների ընդգծումը ուղղանկյան սխեմայի մեջ)։ Չնայած բուլղարական հուշարձանը ազատ թևերով երեքաբսիդավոր չէ, այնուամենայնիվ համոզված ենք, որ այն սերտ կապ ունի Հայաստանի նմանատիպ եկեղեցիների հետ, որոնք բնորոշվում են արևմտյան համեմատաբար երկար, ուղղանկյուն թևերի առկայությամբ։ Եվ այն, որ Կուլատայի եկեղեցին ունի խորանին կից ավանդատներ, թույլ է տալիս այս կառույցը դասել Հայաստանի երեքաբսիդանի՝ Իսի (Խորագույն Հայք)[24], Պեմզաշենի եկեղեցիների շարքը։ Միևնույն ժամանակ ուշադրության է արժանի երեքնիստանոց արևելյան աբսիդը, որը հայկական ճարտարապետության մեջ հազվադեպ երևույթ է (Ողջաբերդ, Տեկոր, Թալին, Բա-

---

[21] Проф. Милко Бичев, նշվ. աշխ., էջ 33։

[22] Н. И. Брунов, Архитектура Византии («Всеобщая история архитектуры», т. 3, Л.-М., 1966, с. 122—123).

[23] Кръстю Миятев, Архитектурата в средневековна България, София, 1965, с. 196, 197, фиг. 225.

[24] Տիրան Մարության, Խորագույն Հայք, Երևան, 1978, էջ 122, նկ. 138ա։

գավան և այլն)[25]։ Ինչ վերաբերում է Կուլատայի գավթին, ապա հայկական և վրացական ճարտարապետության մեջ նրա նախատիպին չենք հանդիպում, չնայած Խորագույն Հայքի Դորդքիլիսայի եկեղեցու արևմտյան պատին կից է նման մի գավիթ[26]։ Հետաքրքիր է, որ ուսումնասիրվող բուլղարական հուշարձանի հյուսիսային և հարավային պատերի մեջ եղած կիսակլոր խորշերը իրենց զուգահեռներն ունեն հիշված Իսի եկեղեցու մեջ։ Տեղին է նշել, որ նման կիսակլոր խորշեր ոչ հազվադեպ զարդարում են XI—XII դդ. Կոստանդնուպոլսի հուշարձանները։ Այս մանրամասնի մեջ տեսնում ենք անտիկ հռոմեական ծագում, որն անցել էր Փոքր Ասիա։ Ինչ վերաբերում է եկեղեցու արևմտյան սենյակների արևմտյան մուտքերին, ապա չնայած Քրիստոնեական արևելքի համար դա բացառիկ երևույթ է, այնուամենայնիվ այն կարելի է տեսնել վաղ միջնադարյան Հայաստանի Արգվաբերի սբ. Աստվածածին եկեղեցու մեջ (VII դ.)[27]։ Նման հորինվածքը թույլ է տալիս ենթադրել, որ այս եկեղեցու արևմտյան ճակատի առջևի մասում եղել է ոչ կապիտալ գավիթ, որտեղից կարելի էր մուտք գործել եկեղեցու արևմտյան սենյակներ։ Այս տեսակետից մի ուրիշ օրինակ է Աթենքի սբ. Առաքյալների եկեղեցին (XI դ.), որը նմանություն ունի հռիփսիմեատիպ հայ-վրացական շենքերի հետ[28]։ Այն ունի նույն հորինվածքը, ինչպես Արգվաբերի և Կուլատայի եկեղեցիները։ Հետաքրքրական է, որ Արգվաբերի, Հռիփսիմեի և Վրաստանում նրա տիպի մի քանի հուշարձանների՝ Ջվարիի, Աթենի Սիոնի, Մարտվիլիի և Աթենքի հունական սբ. Առաքյալների եկեղեցիների արևմտյան սենյակների ծածկը խաչաձև է։ Դա թույլ է տալիս ենթադրել, որ Կուլատայի, Քրիստոնեական արևելքի, ինչպես և Աթենքի եկեղեցիների հորինվածքներում կա որոշ հարազատություն։ Այս տեսակետից ուշագրավ է Գաբրիել Միեյի կարծիքը, որի համաձայն եռաբսիդ տիպի շենքերը, ունենալով արևելյան ծագում, կառուցվել են նաև Բալկաններում (Վիենեի գյուղում)[29]։



Գծ. Կուլատա (Պեարիչկա). եկեղեցու հատակագիծը։

---

25 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 76, рис. 20/1, с. 99, рис. 32; Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. հ. 1, Երևան, 1942, էջ 127, 188, նկ. 84, 109։

26 Տիրան Մարությյան, նշվ. աշխ., էջ 121, նկ. 37բ։

27 M. Thierry, L'église arménienne de la Mère de Dieu d'Arcuaber („Cahiers archeolauiques", XXV, Paris, 1976, p. 39—57, fig. 2).

28 Н. И. Брунов, նշվ. աշխ., էջ 137, նկ. 96։

29 Gabriel Millet, L'école greque dans l'architecture byzantine, Paris, 1916, p. 94.

Կուլատայի եկեղեցու հորինվածքը սերտ կապի մեջ է գտնվում արևելաբյուզանդական հետևյալ հուշարձանների հետ. Սև ծովի Բույուքադա կղզուց ոչ հեռու Ամսարա բնակավայրի (VIII դ.) և Խերսոնեսի (X դ. առաջին կես) եկեղեցիների հետ[30]։ Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Կուլատայի հուշարձանի հորինվածքը արևելյան է, ավելի ճիշտ՝ հայկական։ Ենթադրում ենք, որ ինչպես Կուլատայի, այնպես էլ Վիննենի եկեղեցիները կառուցվել են XI դ. վերջին—XII դ. սկզբներին հայ վարպետների կողմից (ամենայն հավանականությամբ, Տայքից եկած արհեստավորներ), որոնք նաև, մեր կարծիքով, շինել են և մի քանի այլ բուլղարական եկեղեցիներ, ինչպես, օրինակ, Բաչկովոյի վանքի եկեղեցի-դամբարանը և Ասենովոյի բերդի սբ. Աստվածածինը։

Բուլղարիայի IX—XIII դդ. հուշարձանների շարքում ուշադրության է արժանի նաև սբ. Հրեշտակապետների երկհարկանի եկեղեցին։ Այն գտնվում է Բաչկովոյի վանքի համակառույցի մեջ՝ վանքի սբ. Աստվածածին եկեղեցու (1604 թ.) արևմտյան մասում, երեքհարկանի ձգված կառույցի անմիջապես հետևում և թվագրվում է XII—XIII դդ. գոր[31]։ Եկեղեցու առաջին հարկը իրենից ներկայացնում է անհավասար երկու զուգահեռ երեքկամարանի բաց տարածություն, որի արևելյան կողմը կից է գլխավոր եկեղեցու մուտքին։ Հետաքրքիր է, որ այս հարկի և համապատասխան երկրորդ հարկի երկայնական առանցքները թեթևակի շեղ են գլխավոր եկեղեցու առանցքի նկատմամբ։ Այս հարկի արևելյան ճակատը կպած է գլխավոր եկեղեցու արևմտյան պատի միջին մասին։ Երկրորդ հարկն ունի 11×5,7 մ չափեր և իրենից ներկայացնում է դուրս եկած կիսակլոր աբսիդով գմբեթավոր դահլիճի տիպի կառույց[32]։ Աբսիդն ունի մի լուսամուտ։ Գմբեթի քառակուսի հիմքից դեպի կլոր հատակագիծ ունեցող գմբեթավոր թմբուկի հիմքի անցումը կատարվում է առագաստներով։ Եկեղեցու դահլիճի արևելյան և արևմտյան նեղ մասերն ունեն կիսագլանաձև թաղեր, որոնց լայնությունը մի քիչ ավել է, քան թմբուկի հիմքի թաղակիր կամարներինը։ Ուշագրավ է, որ թմբուկի հիմքի տակ եղած հյուսիսային, հարավային և դահլիճի անկյունային որմնասյուները կապված են իրար հետ նեղ թաղակիր կամարներով։ Երկու լայն, ուղղանկյուն կտրվածքով բացվածքները լուսավորում են եկեղեցու գմբեթի տակի տարածությունը։ Եկեղեցու միակ արևմտյան մուտքը կապում է նրա դահլիճը ավելի ուշ կառուցված փոքր և ոչ հավասարակողմ ուղղանկյունաձև գավթի հետ։ Առաջին հարկի պատի շարվածքը կատարված է խամ քարից, երկրորդը նույնպես. այդ շարքերին հաջորդում են աղյուսե երեք շարքեր։ Թմբուկի խորշերի և լուսամուտների միջև տեղավորված են կիսակլոր, պարզ խոյակներով կիսասյուներ (նկ. 3)։

Ա. Չանևա-Դեչևսկան նշում է սբ. Հրեշտակապետների եկեղեցու ճարտարապետության կապը Անդրկովկասի, հատկապես Վրաստանի ճարտարապետության հետ (Գելատիի վանքի սբ. Նիկողայոս երկհարկանի եկեղեցին՝

---

30 Н. И. Брунов, նշվ. աշխ., էջ 117, նկ. 71/1, 2։

31 Кръстю Мнятев, Архитектурата на българското средневековие, с. 117. Ն. Չանևա-Դեչևսկան գտնում է, որ եկեղեցին կառուցվել է XI դ. վերջին և XII դ. սկզբներին. տե՛ս Нели Чанева-Дечевска, Архитектурная близость между церквами св. Архангелов Бачковского монастыря и св. Николая в Гелати («Второй международный симпозиум по грузинскому искусству», Тбилиси, 1977, с. 2).

32 Нели Чанева-Дечевска, նշվ. աշխ., էջ 3; Кръстю Мнятев, Архитектурата на българското средневековие, с. 117.

XIII դ. վերջ—XIV դ. սկիզբ)։ Նա այս կապը տեսնում է նրա առաջին հարկի ոչ պարփակված տարածության, կիսագլանաձև թաղի ծածկի, երկրորդ հարկի, ինչպես և վանքի բակի լայն կամարակապ բացվածքներով հորինվածքների մեջ։ Նույն հեղինակը գրում է, որ այս եկեղեցու թմբուկի զարդավորումը նման է ոչ միայն Ասենովոյի բերդի եկեղեցու, այլև Անդրկովկասի շատ հուշարձանների թմբուկներին։ Միևնույն ժամանակ բուլղարացի գիտնականը հաղորդում է, որ այս երկու հուշարձանների միջև կան նաև տարբերություններ։ Ահա մի քանիսը. վրացական եկեղեցու խաչաձևությունը և բուլղարական հուշարձանի գմբեթավոր դահլիճի տիպի պատկանելը, վերջինի ճակատների խոշոր կամարակապ խորշերի և առաջինի պրոֆիլով շրջանակներով լուսամուտների առկայությունը, վրացական եկեղեցու նուրբ կամարաշարով հնգանիստ աբսիդը և բուլղարական հուշարձանի խորշերով երեքնիստանի աբսիդի գոյությունը։

Նկ. 3—Բաչկովո. սբ. Հրեշտակապետների եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից։

Կասկած չկա, որ Ասենովոյի բերդի եկեղեցու, Բաչկովոյի վանքի և ուսումնասիրվող եկեղեցիների երկրորդ հարկերը պատկանում են գմբեթավոր դահլիճների եկեղեցիների տիպին։ Առաջին հերթին դա արտահայտվում է դրանց հյուսիսային և հարավային պատերին կից թաղակիր կամարների առկայության մեջ։ Բաչկովոյի երկհարկանի հուշարձանում անկյունային որմնասյուները, ինչպես և արևմտյան պատին կից թաղակիր կամարի գոյությունը կարելի է բացատրել նրանով, որ թաղի ծանրության մի մասը իր վրա է վերցնում թաղակիր կամարը, մասամբ նույն դերը կատարելուց աղատելով արևմտյան պատը։ Բայց Ասենովոյի բերդի եկեղեցու մեջ արևմտյան թաղակիր կամարի բացակայությունը բացատրվում է նրանով, որ գավիթը մի կոշտ տարածական համակարգ է և իր վրա է վերցնում աղոթատեղի արևմտյան մասի կոնստրուկցիայի որոշ բեռնվածություն։ Ինչպես հայտնի է, հյուսիսային և հարավային պատերին կից գոյություն ունեցող թաղակիր կամարները բնորոշ են ընդհանրապես քրիստոնեական Միջագետքի վաղ հուշարձաններին։ Ըստ Մ. Բիլի, դրանց կիրառման նպատակը թաղածածկ ներքին շենքի տարածությունը մեծացնելն է։ Հետագայում այդ թաղակիր կամարները ունենում են ավելի շուտ դեկորատիվ նշանակություն, քան կոնստրուկտիվ[33]։ Ուշագրավ է, որ այսպիսի լուծման հանդիպում ենք նաև Քրիստոնեական արևելքի VI—

[33] Gabriel Millet, նշվ. աշխ., էջ 45.

VII դդ., Ջարջառիս, Հովհանավանք, Ուրբնիսի[34], Վանա լճի հարավ-արևմըտյան ափից ոչ հեռու մի քանի հուշարձանների մեջ (Թուխ, Խնկորձին, Պաշվակ, Հողեվանք)[35]։ Սա հելլենիստական ծագում ունեցող ձև է։ Այստեղից էլ մեր համոզմունքը, որ համաձայն Բաչկովոյի վանքի երկհարկանի սբ. Հրեշտակապետների եկեղեցին, ինչպես և Ասենովոյի բերդի սբ. Աստվածածին եկեղեցին և նույն վանքի եկեղեցի-դամբարանը պատկանում են նույն տիպին, որի մեջ մտնում են նաև Քրիստոնեական արևելքի ավելի վաղ հայտնի օրինակները։ Այսպիսով, Բաչկովոյի վանքի սբ. Հրեշտակապետների եկեղեցին գմբեթավոր տիպի դահլիճի ցայտուն օրինակ է, որի վաղ նմուշը, ինչպես համոզված ենք, եղել է Ասենովոյի բերդի սբ. Աստվածածին եկեղեցին։ Վերջինը, ինչպես նշում է Ն. Չանևա-Դեչևսկան, արտացոլում է Պտղնի, Արուճ (VII դ.), Վաշնաձյանի (VIII—IX դդ.) հատակագծային և ծավալատարածական հորինվածքները։ Այստեղից հետևում է, որ սբ. Հրեշտակապետների եկեղեցու ծավալատարածական կոմպոզիցիան մի գործ է՝ կատարված Քրիստոնեական արևելքի հիշված հուշարձանների ոգով[36]։

Այն ենթադրությունը, թե Գելատիի եկեղեցին կառուցվել է Բաչկովոյից վերադարձած վանականների կողմից, հնարավոր է. դժվար է հավատալ, սակայն, որ նրանում իր արտացոլումն է գտել երկհարկանի շենքի գաղափարը, քանի որ նրա ակունքը հայտնի է դեռ IV դարից (Աղցի երկհարկանի դամբարանը)[37]։ Ինչ վերաբերում է Գելատիի, ինչպես և Բաչկովոյի եկեղեցիների՝ հենարանների վրա կառուցվելուն, ապա դա, մեր կարծիքով, բացատրվում է նրանով, որ ինչպես այս շենքը, այնպես էլ ընդհանրապես վանքերում այլ եկեղեցական շենքերը պետք է որ գերիշխող դեր ունենան դրանց շրջապատող քաղաքացիական շենքերի նկատմամբ կամ առնվազն դրանցից ցածր չպետք է լինեն։

Եթե Բաչկովոյի եկեղեցի-դամբարանը և Ասենովոյի բերդի սբ. Աստվածածին եկեղեցին, չնայած վերջինի մեջ հաստատված չէ եկեղեցի-դամբարան լինելու փաստը, ծառայել են դամբարանային նպատակների համար, ապա, ինչպես տեսանք, Գելատիի սբ. Նիկողայոսի և Բաչկովոյի վանքի սբ. Հրեշտակապետների եկեղեցիները այսպիսի նպատակների չեն ծառայել։ Այս երկու հուշարձանների մեջ տեսնում ենք վանքերի, բերդերի մուտքերի վրա մատուռներ կառուցելու ավանդույթների յուրահատուկ բեկում։ Արդյո՞ք այդ մասին չեն վկայում, օրինակ, մոլդավական բերդերի Բելգորոդ-Դնեստրովսկի (XIV դ. վերջ—XV դ. առաջին տասնամյակներ) և Սորոկայի (XV դ.)[38] մուտքերի վրա

---

[34] *Վախթանգ Բերիձե, Հին վրացական ճարտարապետությունը, Թբիլիսի, 1974, էջ 94, նկ. 17—19 (վրացերեն)։*

[35] Paolo Cuneo, Le basiliche di Tux, Xncorgin, Pašvackʻ Xogeacʻvanc, Roma, 1973.

[36] Нели Чанева-Дечевска, *նշվ. աշխ., էջ 9։*

[37] *Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 112, նկ. 65։* А. А. Саинян, Архитектура IV—конца первой половины VI в. («Очерки по истории архитектуры древней и средневековой Армении», Ереван, 1978, с. 61).

[38] А. Тораманян, Об архитектуре и о времени возведения цитадели в Белгород-Днестровском («Тези плéнарних и секцiиних доповiдей XV наукова конференцiя iнституту археологii» АН Укр. РСР, Одеса, 1972, с. 403, 404); *նույնի՝* Зодчество Молдавии XIV—начало XX вв. и его связи с архитектурой Закавказья (автореф. докт. дисс., Л., 1973, с. 18).

մատուռների կառուցումը։ Այսպիսի մատուռ է կառուցված նաև Ռումինիայի Սուչավա քաղաքի Ջամկա հայկական վանքում (XVII դ.)[39]։ Ավելի վաղ օրինակներից է Կիևում Ոսկյա դարպասի համակառույցի մուտքի վրայի եկեղեցին (1037)[40]։ Հայաստանում կիսակլոր աբսիդով մատուռի մնացորդներ պահպանվել է Ցախաց Քար վանքի հուշարձանների արևմտյան խմբի համակառույցի մուտքի վրա։ Հավանական է, մատուռը կառուցվել է X—XI դդ.։ Ահա այս մի քանի օրինակները թույլ են տալիս, մեր կարծիքով, հաստատելու, որ հիշված գաղափարի ծագումը արևելյան է. չենք սխալվի, եթե ասենք, որ այն հայկական է։

Ամփոփելով նշենք, որ քննվող բուլղարական ճարտարապետական հուշարձանների հորինվածքները ընդհանուր առմամբ հատուկ են վաղքրիստոնեական Արևելքի ճարտարապետությանը (Պլիսկայի պալատի երկրորդ հարկը, նույնանուն բերդի բազիլիկայի ու Վինիցայի եկեղեցու հորինվածքները), և մասնավորապես հայկական ճարտարապետությանը (Գերմանի, Կուլատայի և Բալկովոյի վանքի սբ. Հրեշտակապետների եկեղեցիները)։

К ИЗУЧЕНИЮ НЕКОТОРЫХ АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ БОЛГАРИИ IX—XIII вв.

(параллели с восточнохристианскими памятниками)

АРШАВИР ТОРАМАНЯН

Резюме

Архитектура дворца в Плиске восходит к композиционному решению Большой базилики вне стен цитадели. Причем утверждения о влиянии чужеземной архитектуры отнюдь несостоятельны. Идея двухэтажности композиции дворца в Плиске встречается и в однотипных церквях Бачковского монастыря и Асеновой крепости, что восходит к древнему прообразу раннесредневековой восточнохристианской архитектуры (Ахц—гробница Аршакидов, Джвари—маленькая церковь). Знаменитая церковь в Винице была и остается памятником исконно болгарским, корни которого уходят в далекое прошлое; памятник был создан на базе небольшого сводчатого квадратного помещения, широко распространенного в странах Христианского Востока. Общий дух структуры церкви св. Германа действительно армянский, и он находит свою

---

[39] L. Şimanschi, Mărăstirea Zamca, Bucureşti, 1967, p. 25; А. Х. Тораманян, К изучению строительной деятельности армян в Румынии. I. Сучава («Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1980).

[40] Ю. С. Асеев и П. Н. Максимов, Архитектура древнерусского государства (X в.—начало XII в.), («Всеобщая история архитектуры», т. 3, с. 527).

параллель в церквях в Эчмиадзине, Багаране и др. Своеобразна схема церкви в Кулате, имеющая принципиальное сходство с некоторыми памятниками Тайка и Васпуракана. Особенности церкви св. Апостолов в Бачковском монастыре характеризуются прежде всего тем, что ее второй этаж—купольный зал имеет как дальний прототип церквей Армении (Птгни, Аруч), так и Грузии (Вачнадзиани). В этом сказывается преломление решений часовен над входами в монастыри и цитадели. Примером тому служат часовни монастырского комплекса Цахац Кар в Армении, Гелати в Грузии, цитаделей Белгород-Днестровского на Украине, Сороки в Молдавии, армянского монастыря Замка в Сучаве (Румыния).